ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"12" 10 2011թ. № 105 Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.17. կետերի դրույթներով և համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության և համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերակցության միջև 1997 թվականի սեպտեմբերին ստորագրված <<Առողջապահության ֆինանսավորման բարելավում և առողջության առաջնային պահպանման զարգացում>> թիվ 2979-ԱՄ, 2004 թվականի հունիսի 29-ին ստորագրված <<Առողջապահական համակարգի արդիականացում>> թիվ 3920-ԱՄ, 2007 թվականի մարտի 9-ին ստորագրված <<Առողջապահական համակարգի արդիականացման 2-րդ ծրագիր>> թիվ 4267-ԱՄ, 2006 թվականի հունիսի 7-ին ստորագրված <<Թռչնագրիպին նախապատրաստվածության ծրագիր>> թիվ 4178-ԱՄ վարկային համաձայնագրերի, ինչպես նաև 2007 թվականի հունիսի 8-ին ստորագրված <<Թռչնագրիպին հակազդելու ծրագիր>> թիվ MDTF 058076 դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում իրականացված ծրագրի համաձայն կառուցված, վերակառուցված և նորոգված շենքերի ու տարածքների հանձնում-ընդունումն ապահովող միջոցառումների մասին>> N 1023-Ն որոշման 5-րդ և 8-րդ կետերի պահանջների որոշում եմ.

1. <<Առողջապահության ֆինանսավորման բարելավում և առողջության առաջնային պահպանման զարգացում>> վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզում կառուցված շենքերի շահագործումը ապահովելու և համապատասխան մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններին հանձնում-ընդունում իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Աշոտ Մարդյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Աշոտ Ծատրյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Կառլեն Կոզմանով - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Համլետ Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ սահմանված կարգով ապահովել շենքերի հանձման-ընդունման աշխատանքները ՀՀ կառավարության N 1023-Ն որոշման 1-ին, 4-րդ և 5-րդ հավելվածներին համապատասխան:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. հոկտեմբերի 12
ք. Կապան